ՊԱՏԻՎ ՈՒՂԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 5(46), 30 հունիսի, 2022թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍԱՆՈՂԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՉԵՄՊԻՈՆ Է

Մայիսի 21-31-ը Երևանում կայացավ բռնցքամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնությունը: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի 3-րդ կուրսի սովորող Ռաֆայել Գեղամի Հովհաննիսյանը Բռնցքամարտի Եվրոպայի 2022 թ. առաջնությանը հռչակվեց փոխչեմպիոն:

Մրցաշարի ողջ ընթացքում Ռաֆայել Հովհաննիսյանը, հայկական բռնցքամարտի լավագույն ավանդույթները շարունակելով, անզիջում պայքար մղեց ու թեև չնվաճեց ոսկե մեդալը, սակայն վստահ ենք՝ նրա չեմպիոնությունը դեռ առջևում է:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՀՅՈՒՐՆ Է ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԿՅՈՐԴԸ

Հունիսի 8-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանը, Միջազգային համագործակցության և ՏՏ տեխնոլոգիաների ներդրման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գրիգորի Դավթյանը, նույն բաժնի պետի տեղակալ, ոստիկանության մայոր Կարինե Սաֆարյանն ընդունեցին Վրաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության ոստիկանական կցորդ Դիեդրիխ էբերսին:

Մ.Մարկոսյանը ներկայացրեց Կրթահամալիրի կառուցվածքը, գործունեությունը, իրականացվող կրթական ծրագրերը, դիմորդների ընդունելության կարգը, ինչպես նաև օտարերկրյա պետությունների ոստիկանական ուսումնական հաստատությունների հետ փոխգործակցություն հաստատելու ուղղությամբ տարվող շարունակական աշխատանքները:

Դ. էբերսն իր հերթին նշեց, որ իր այցի նպատակն է Գերմանիայի Դաշնային Հանրապետության ոստիկանական ուսումնական հաստատությունների և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի միջև համագործակցության շոշափելի եզրեր գտնել: Վերջինս նաև հանդես եկավ առաջնահերթ համարվող հանցավորության ոլորտների վերաբերյալ մոտ ապագայում դասընթացներ անցկացնելու առաջարկով: Հանդիպման ավարտին նա պատրաստակամություն հայտնեց աջակցելու այդ աշխատանքներին:

Քննարկմանը հետևեց շրջայց Կրթահամալիրի տարածքում, փորձակայաններում, կրիմինալիստիկայի լսարաններում, մարզասրահում և ՀՀ ոստիկանության պատմության թանգարանում:

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում հունիսի 10-ին կազմակերպվեց գիտագործնական համաժողով, որի ընթացքում քննարկվեցին ՀՀ նոր քրեական և քրեադատավարական օրենսդրությունը, նորույթներն ու իրավակիրառման հնարավոր խնդիրները: Համաժողովին մասնակցելու համար հրավիրվել էին ՀՀ տարբեր գերատեսչություններից մասնագետներ՝ իրավաբան գիտնականներ, իրավակիրառ պրակտիկ մասնագետներ, որոնք ներկայացնում էին ՀՀ դատախազությունը, ՀՀ քննչական կոմիտեն, ՀՀ հակակոռուպցիոն ծառայությունը, ՀՀ ոստիկանության շտաբը և այլ կառույցներ: Համաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնից, Հայ-ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնից, ՀՀ արդարադատության ակադեմիայից, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ու քրեական դատավարության ամբիոններից: Մասնակցում էին նաև ուսանողներ Հայաստանում ֆրանսիական համալսարանից, ՀՀ ոստիկանության կրթահամալիրից:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանը և նշեց, որ համաժողովի թեման շատ արդիական է, հասարակության լայն շրջանակների կողմից այն տարբեր ընկալումներ ունի, և սույն համաժողովը մեկ առիթ է լույս սփռելու բազմաթիվ մութ անկյունների վրա, որոնք ի հայտ են եկել օրենսդրության տվյալ ոլորտը կանոնակարգելիս կամ լրացնելիս: Մ. Մուրադյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին գիտագործնական համաժողովին մասնակցելու առաջարկը չմերժելու համար և մաղթեց արդյունավետ աշխատանքային օր:

Առաջին զեկույցը ներկայացրեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս, ի.գ.թ., դոցենտ Դավիթ Թումասյանը: Զեկույցի թեման էր «Պատժի տեսակներն ու համակարգը ՀՀ նոր քրեական օրենսգրքի համատեքստում», որի ընթացքում բանախոսը համեմատական վերլուծության կարգով ներկայացրեց ՀՀ հին և նոր քրեական օրենսգրքերում առկա նորմատիվ կարգավորումները, նշվեցին հին օրենսդրությամբ մինչ այժմ առկա բացերը և իրավակիրառ պրակտիկան: Ներկայացնելով ՀՀ քրեական նոր օրենսգրքի նորմատիվ կարգավորումները՝ Դ. Թումասյանը վերլուծության տեսքով ներկայացրեց այն կարևոր հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել ՀՀ քրեական նոր օրենսգիրքը մշակելու համար:

Հնչեցին նաև ելույթներ «Հանցագործությունների բազմակիության ինստիտուտը ՀՀ քրեական նոր օրենսդրությունում (իրավահամեմատական վերլուծություն)», «Քրեադատավարական ապացուցման հիմնախնդիրները մասնավոր մեղադրանքով վարույթում», «Այլընտրանքային խափանման միջոցների ներդրման անհրաժեշտությունը և դրանց կիրառման որոշ հիմնահարցեր ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով», «Սեքսուալ բնույթի բռնի գործողությունների օբյեկտիվ կողմն ըստ Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի կարգավորումների» և այլ թեմաներով, որտեղ բանախոսները մանրամասն ներկայացրին ՀՀ նոր և հին քրեական օրենսգրքերի նորմատիվ կարգավորումների վերլուծությունները և իրավակիրառ պրակտիկան:

Ընթացքում ծավալվեց գիտական արդյունավետ քննարկում, մասնակիցները զեկուցողներին ուղղեցին ոլորտի նորմատիվ կարգավորումներին առնչվող բազմաթիվ հարցեր:

Համաժողովն ամփոփեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանը՝ գիտական երկխոսությունը համարելով ստացված, և նշեց, որ նմանատիպ քննարկումները կարևոր են, քանի որ բազմաթիվ խնդրահարույց հարցերի տրվում են սպառիչ պատասխաններ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՄՓՈՓԻՉ ՆԻՍՏԸ

Հունիսի 16-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի ամփոփիչ նիստը: Բացման խոսքով հանդես եկավ ուսանողական խորհրդի նախագահ, ոստիկանության կրտսեր սերժանտ Հ. Հարությունյանը և ներկայացրեց կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները: Նա նշեց, որ ուսանողական խորհուրդը հիմնականում կատարել է իր առջև դրված խնդիրները:

Նիստում անդրադարձան նաև առկա բացթողումներին, որոնք ունեին օբյեկտիվ պատճառներ:

Անդրադարձան նաև այն փաստին, որ սովորողների կողմից առաջադրված մտահոգիչ հարցերը հաջողությամբ լուծվել են Կրթահամալիրի ղեկավարության հանձնարարականով: Քննարկվեց նաև ՈՒԽ հետագա գործունեության ծրագիրը:

Նիստի ավարտին ՈՒԽ նախագահը շնորհակալություն հայտնեց խորհրդի անդամներին՝ համատեղ աշխատանքի և գրանցած արդյունքների համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Հունիսի 15-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցավ սահմանադրական բարեփոխումների խորհրդի անդամ Մ.Մելքոնյանի և սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ Դ.Հակոբյանի հանդիպումը Կրթահամալիրի ակադեմիայի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ:

Հանդիպման ընթացքում դասախոսները ներկայացրին գործող Սահմանադրությամբ նախատեսված առանձին կարգավորումների վերաբերյալ իրենց նկատառումները և համապատասխան առաջարկություններ արեցին:

Ծավալվեց բովանդակալից քննարկում, որի ավարտին հյուրերը փաստեցին, որ հանդիպումն արդյունավետ էր, և Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից ներկայացված նկատառումներն ու առաջարկությունները հաշվի կառնվեն սահմանադրական բարեփոխումների խորհրդի և մասնագիտական հանձնաժողովի կողմից:

ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ոստիկանության պարեկային ծառայությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ուսուցման երրորդ հոսքի ընդունելության շրջանակներում ՀՀ ոստիկանության կրթահամալիրում հունիսի 6-ին մեկնարկեց առաջին՝ մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգումը (թեստավորումը):

Ընդունելության ստուգմանը ներկա էին ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալ, Կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Մուրադյանը, ընդունող հանձնաժողովի անդամները:

Ընդունելության ստուգումները կիրականացվեն հունիսի 6-ից մինչև հուլիսի 15-ը ներառյալ:

Յուրաքանչյուր ստուգումից հետո արդյունքները հասանելի կլինեն հետևյալ հղումով՝ https://www.edupolice.am/patrol/exam.html

Ստուգումները հաջողությամբ հաղթահարած դիմորդները կանցնեն ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 5-ամսյա ուսումնառության:

Մաղթում ենք հաջողություն:

ԻՄ ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔ, ԻՄ ԵՐԵՎԱՆ

Աշխարհի շատ այլ կետերում քիչ չեն հնագույն քաղաքներ, իսկ ավելի շատ՝ հին քաղաքների ավերակներ, սակայն ո՞րն է Երևանի տարբերությունը այդ հին քաղաքներից. այն, որ նա ունի իր ծննդյան գրավոր վկայականը, իր հիմնադրման տարեթիվը, որի միայն ամիսներն ու օրերը չեն հայտնի: Երևանի ծննդյան սեպագիր վկայականը գտնվել է Արին-բերդ բլրի վրա:

Երևանի արվարձան Նորք գյուղի բնակիչ Պապո Տեր-Ավետիսյանը 1879 թվականին բլրի տակի իր հողամասում գտնում է (անշուշտ, բլրից գլորված) մշակված բազալտի մի բեկոր: Քարի մի կողմի սրբատաշ լինելը և վրան անծանոթ սեպաձև ուղիղ գծերը գրավում են գյուղացու ուշադրությունը: Նա ծանր քարը բերում է իր տուն և պահում սրբությամբ:

Արին-բերդ բլրի գագաթի ընդարձակ հարթակի վրա էր, որ ծայրը ցցված քարը գետնից հանելուց հետո հայտնվեց Արգիշտիի շինարարական արձանագրությունը: Սկսված պեղումները հողի տակից աշխարհ հանեցին մի քաղաքի ճոխ միջնաբերդի ավերակներ և մի քաղաքի անուն՝ Էրեբունի, որը հազարամյակներով պահ էր տրված հայրենի հողին: Տարիների պեղումներով հայտնաբերվեցին վարչական, տնտեսական և բնակելի շենքերի ավերակներ՝ համապատասխան սեպագիր արձանագրություններով և հիասքանչ արվեստով արված որմնանկարներով:

Ավելի վաղ շրջանում Վանից հայտնաբերված նյութերը, համադրելով նոր գտնվածների հետ, գիտնականները հավաստիացրին, որ Էրեբունի քաղաքը, որը գտնվում է Երևանի տարածքում, հին Երևանն է: Գտնվել էր Երևանի անձնագիրը՝ համաձայն որի Էրեբունի-Երևանը կառուցվել էր Ք. Ա. 782 թվին:

Ժամանակի ընթացքում քաղաքի վարչական տարածքը մեծացավ 5 անգամ: Սկսվեց կառուցապատումը. Երևանը կառուցապատվում էր բազալտով, գրանիտով, մարմարով: Ամենատարածված շինանյութը վարդագույն տուֆն էր: Եվ քանի որ այդ շինանյութն ինքնատիպ գունագեղություն ու առանձնահատուկ երանգ էր տալիս քաղաքին, Երևանն անվանեցին «վարդագույն քաղաք»: Հետագա տարիների ընթացքում մայրաքաղաքի տարածքն էլ ավելի ընդլայնվեց: 1991թ. սեպտեմբերի 21-ին Երևանը դարձավ ոչ միայն անկախ Հայաստանի Հանրապետության, այլև աշխարհասփյուռ հայության մայրաքաղաք: Ժամանակակից, բայց մշակութային ինքնությունը պահպանած Հայաստանի վարդագույն մայրաքաղաքին դժվար է չսիրահարվել: Երևան՝ աշխարհի հնագույն քաղաքներից մեկը, որը, ժամանակի ընթացքում բազմաթիվ փոփոխությունների ենթարկվելով, պահպանել է անցյալի դրոշմը:

Դարերի ընթացքում քաղաքը մնացել է կանգուն՝ անցնելով բազում արհավիրքների ու փորձությունների միջով: Ժողովուրդը շարունակում էր արարել՝ դիմակայելով բոլոր արհավիրքներին: Զուգահեռաբար ստեղծվել է քաղաքակրթություն՝ արժեքավոր մշակույթով ու գիտությամբ:

Մեր վարդագույն քաղաքն ունի մի տխուր բարձունք, այնտեղ ոչինչ վարդագույն չէ, այնտեղ ամեն ինչ սև ու սպիտակ է՝ շրջապատված եռագույնով: Եռաբլուրի բարձունքում՝ հայրենիքի համար նահատակված հայ քաջորդիների շիրիմների կողքով անցնելիս հասկանում ես մի ճշմարտություն՝ հայը զենք է վերցնում սիրուց՝ մայր հողի, հարազատի, մերձավորի հանդեպ ունեցած սիրուց, նրանց արժանապատվությունն ու կյանքը պաշտպանելու գիտակցումից դրդված: Խաղաղությամբ ննջե՛ք, մեր հերոսնե՛ր, Ձեր չկրակած փամփուշտներով մենք՝ ողջերս, կշարունակենք պաշտպանել արյունով մյուռոնված մեր հողը: Եռաբլուրի արևներն ամեն ինչ արել են, որ մեր Հայրենիքի գույները չխաթարվեն, որ իրենց շողերով մենք մեր Հայրենիքի գույները վերականգնենք:

▶ 3

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Հունիսի 13-ին Կրթահամալիրում մեկնարկեց ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա վճարովի, անվճար և հեռակա ուսուցման 2021-2022 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորումը, որի կապակցությամբ հրավիրվել էր խորհրդակցություն:

Քննարկմանը ներկա էին առարկայական հանձնաժողովների նախագահները, անդամները և ընդհանուր հանձնաժողովի անդամները: Հանդիպման ընթացքում քննարկվեց պետական ամփոփիչ ատեստավորումը պատշաճ անցկացնելու անհրաժեշտությունը, ստուգվեցին նախապատրաստական աշխատանքների իրականացման արդյունքները:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ամփոփիչ ատեստավորման ընդհանուր հանձնաժողովի նախագահի տեղակալ, ոստիկանության գնդապետ ՄգՄուրադյանն իր գոհունակությունը հայտնեց անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները պատշաճ իրականացնելու համար:

Համաձայն Կրթահամալիրի ակադեմիայի բակալավրիատի 2021-2022 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և նախորդ տարիների շրջանավարտների վերաատեստավորման ժամանակացույցի ավարտական աշխատանքները կտևեն մինչև հուլիսի մեկը:

ԿԱՅԱՑԱՎ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Հունիսի 15-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կայացավ «Թրաֆիքինգի դեմ պայքարի քրեաիրավական, քրեաբանական և քրեադատավարական խնդիրները» թեմայով միջազգային գիտագործնական համաժողով: Առցանց համաժողովին մասնակցում էր ՀՀ, ՌԴ, Ուզբեկստանի Հանրապետության ՆԳՆ ուսումնական և գիտահետազոտական 12 հաստատության 17 ներկայացուցիչ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանը բացման խոսքում ողջունեց և շնորհակալություն հայտնեց համաժողովի մասնակիցներին, ընդգծեց համաժողովի թեմայի կարևորությունն ու արդիականությունը ոչ միայն մասնակից երկրների, այլև ամբողջ աշխարհի համար. «Թրաֆիքինգը (մարդկանց առևտուրը) համաշխարհային խնդիր է, որը պահանջում է պետությունների ու միջազգային կառույցների միացյալ և համընդգրկուն պայքար՝ ընդդեմ անդրազգային կազմակերպված հանցավոր խմբերի դեմ՝ հաշվի առնելով տվյալ հանցագործության զարգացման բազմաշերտ փուլերը: Այս խնդիրը գնալով աճում է՝ տնտեսական գլոբալիզացիայի, աշխարհաքաղաքական, մշակութային, սոցիալական փոփոխություններին զուգընթաց»: Կրթահամալիրի պետը հաջողություն մաղթեց մասնակիցներին՝ նշելով, որ տվյալ հանդիպումը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու խնդրի վերաբերյալ մասնագետների վերլուծություններին, գիտահետազոտական արդյունքներին, թրաֆիքինգը կանխարգելելուն ուղղված հետագա ջանքերին:

ՌԴ ՆԳՆ Սիբիրի իրավաբանական ինստիտուտի պետի պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ Նիկոլայ Ցուկանովն էլ իր հերթին շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին և նշեց, որ այս համաժողովը լավ առիթ է այսուհետ հաճախ համագործակցելու ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հետ: Նա նաև վստահեցրեց, որ տեսաբանները լիարժեք կկարողանան բացահայտել լուրջ մարտահրավերներ ներկայացնող հանցագործության դեմ պայքարի հիմնախնդիրները:

Երախտիքի խոսք հայտնեց նաև ՌԴ ՆԳՆ Վոլգոգրադի ակադեմիայի գիտական աշխատանքների գծով պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ալեքսեյ Ալեքսեևը՝ մաղթելով արդյունավետ քննարկումներ:

Համաժողովի ընթացքում մասնակիցները զեկույցներով անդրադարձան խնդրի քրեաիրավական, քրեաբանական, քրեադատավարական ոլորտների ուսումնասիրմանը ԱՊՀ երկրներում: Ներկայացվեցին արարքը կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու, գործի քննության, ապացուցման գործընթացի, հանցագործության համակցման, ներպետական ու միջազգային օրենսդրական կարգավորումները, դատահոգեբանական մոտեցումները: Առանձնակի մանրամասնությամբ բանախոսները վերլուծեցին թրաֆիքինգի տեսակները, ներկայացրին դրա վերաբերյալ իրականացրած վիճակագրական աշխատանքները՝ բացահայտելով տվյալ հանցագործության լատենտայնության բարձր աստիճանը, տուժած անձանց թիրախային խմբերը և քրեածին տարրերը: Բանախոսներից յուրաքանչյուրը նոր լուծումներ առաջարկեց թրաֆիքինգի կանխարգելման մեխանիզմների ներդրման համար:

Ակտիվ քննարկում ծավալվեց թրաֆիքինգի մասին ՀՀ և ՌԴ քրեաիրավական նորմերի տարբերությունների վերաբերյալ:

Համաժողովը վարում էր ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանը, որը, ամփոփելով համաժողովի արդյունքները, հույս հայտնեց, որ նմանատիպ հանդիպումները կկրեն շարունակական բնույթ և հաջորդ անգամ կիրականացվեն առկա հանդիպման ձևաչափով:

ԻՄ ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔ, ԻՄ ԵՐԵՎԱՆ

2 ◀ Արևն ու լույսը ծագում են Արևելքից: Արարչագործության կենտրոնը, ըստ օտար աղբյուրների, Հայաստանն է: Ասինքն՝ այստեղից են ծագում մշակույթն ու քաղաքակրթությունը: Արևելքից է ծագում նաև հոգևոր լույսը, որի մասին խոսելիս արդեն գործ ունենք աստվածային աշխարհի հետ: Առանց հոգևոր լույսի մարդկությունը կխարխափեր վայրի խավարի մեջ ու չէր զանազանվի կենդանական աշխարհից: Մենք ստեղծեցինք մեր ինքնատիպ ճարտարապետությունը, արվեստը, գրականությունը և գիտությունը՝ հոգևոր-մշակութային, քաղաքակրթական բոլոր այն հիմքերը, որոնցով հպարտանալու իրավունք ունենք հավիտենապես:

Երևանը բացառիկ է նաև իր աշխարհագրական դիրքով: Այն գտնվում է երեք կողմերից լեռներով շրջապատված պլատոյի վրա: Հյուսիս-արևմուտքից Արագած լեռն է, հյուսիսից՝ Քանաքեռի սարահարթը, արևելքից՝ Գեղամա լեռները: Եվ քաղաքի գրեթե յուրաքանչյուր կետից կարելի է վայելել Հայաստանի խորհրդանիշ Արարատ լեռան գեղեցկությունը, որին որբացրել ու անմայր են թողել, սակայն, միևնույն է, նա, լինելով տարագիր, իր ստորոտին, իր հովի տակ է

առել Արարատյան դաշտավայրն ու մեր սիրելի վարդագույն քաղաքը: Եվ դա շատ խորհրդանշական է՝ աշխարհի գեղեցկագույն լեռներից մեկի ստորոտին սփռված վարդագույն քաղաքն է, որը հայերի շատ սերունդների երազանքն է:

Զուր չէ, որ Պարույր Սևակը, Հովհաննես Շիրազը, Վլադիմիր Հարությունյանը և շա՜տ ու շա՜տ հայ երախտավորներ բազում գեղեցիկ տողեր են նվիրել մեր չքնաղ մայրաքաղաքին, մեր Հայաստան աշխարհին... Գեղեցիկ է Երևանը, միայն նրա համար, որ մերն է, բայց մի բան ակնհայտ է՝ որքան շատ ես խորանում նրա կենսագրության մեջ, այնքան ավելի ես սիրում նրան:

Հայերն ունեն բոլոր իրավունքներն իրենց տեսակով ու ունեցածով հպարտանալու համար:

Մենք մեզ ո՛չ ոքից չենք գերադասում:
Պարզապես մենք էլ պիտի ընդունենք,
Որ մե՛նք, միայն մե՛նք Արարատ ունենք,
Եվ որ այստեղ է՝ բարձրիկ Սևանում,
Երկինքը իր ճիշտ պատճենը հանում...

Աննա Սարուխանյան
ոստիկանության մայոր

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՉԷ, ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՉԷ, ՔԱՋՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ. ԱՀԱ՛Ռ ԹԵ ԻՆՉՆ Է ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի 3-րդ կուրսի սովորող Ռաֆայել Հովհաննիսյանի հետ: Մեծ հպարտությամբ կարող ենք նշել, որ մայիսի 31-ին նա դարձավ Եվրոպայի առաջնության փոխչեմպիոն:

Գնացինք...

-Առաջին հարցը, իհարկե, խոսելով չեմպիոնի հետ, պետք է հնչի բռնցքամարտից: Ի՞նչն ես համարում քո հաջողությունների գաղտնիքը:

- Միայն ու միայն քրտնաջան աշխատանքը, բայց՝ խելացի կերպով, ոչ մի բան երբևիցե հեշտ չի տրվում: Աշխատել, աշխատել ու նորից աշխատել:

- Իրավագիտություն, բռնցքամարտ, ինչպե՞ս ես համատեղում երկու միմյանց հետ կապ չունեցող ոլորտները:

- Սկզբից չէի ցանկանում սովորել ոչ մի մասնագիտությամբ: Մայրս դրա հետ չէր համակերպվում: Հետո ինքս հասկացա, որ եթե ուժը գերազանցի խելքին, ապա ուղղակի չեմ կարողանա ճիշտ աշխատանք տանել թե՛ պարապմունքներին, թե՛ ռինգում: Ու քանի որ չեմ սիրում մաթեմատիկա, որոշեցի իրավաբանական կրթություն ստանալ: Գերազանց չէ, բայց կարողանում եմ լիովին համատեղել:

- Ի՞նչ է սպորտը քեզ համար:

- Սպորտը մի մեծ աշխարհ է, որտեղ ամեն մարդ կարող է իր անկյունը գտնել:

- Ի՞նչ կասես մենամարտի մասին: Դժվա՞ր էր:

- Ունեցել եմ 4 մենամարտ, մենամարտերից հետո՝ տարբեր վնասվածքներ, լարվածություն՝ ողջ մրցման ընթացքում: Միանշանակ դժվար էր, բայց դա նորմալ էր. գիտեի՝ ինչ է սպասվում:

- Ապագա ծրագրերն արդեն հայտնի՞ են:

- Կոնկրետ այս պահին միակ ծրագիրը, որ ունեմ, վերականգնվելն է, Իսկ հետո՝ նորանոր մրցումներ ու միայն հաղթանակներ:

- Ինչպե՞ս ընդունեցիր մեծ ուշադրության հոսքը դեպի քեզ: Դժվար չէ՞ր:

- Բավականին դժվար էր. երբևիցե նման ուշադրության չէի արժանացել, չէի պատկերացնում, որ անծանոթ միջավայրում նման ուշադրության կարժանանամ, ընդհուպ՝ այս արտահայտությունը՝ կարո՞ղ ենք նկարվել:

- Մինչև ե՞րբ եք նախատեսում մնալ պրոֆեսիոնալ բռնցքամարտում:

- Միայն կասեմ, որ սպորտը կարճ կյանք ունի:

- Խոսենք մանկությունից: Ինչպիսի՞ն էր այն, ո՞վ էր քո հերոսը:

- Ունեցել եմ շատ գունեղ մանկություն, մանկապատանեկան տարիքից ակտիվ եմ եղել թե՛ մանկապարտեզում, թե՛ դպրոցում:

- Իսկ որո՞նք են եղել մանկության տարիների խաղերը:

- Բակում միշտ ընկերներիս հետ սիրել եմ ֆուտբոլ խաղալ:

- Ինչպիսի՞ն էին դպրոցական տարիները: Կպատմե՞ս այդ տարիներից:

- Սովորել եմ 162 միջնակարգ դպրոցում: Շատ հետաքրքիր տարիներ էին, սակայն մրցումներիս պատճառով բացակայություններս շատ են եղել:

- Գիրք. ո՞ր գիրքն է, որ երկրորդ անգամ կընթերցես:

- «Սրճարան աշխարհի եզրին»:

- Խոսենք հոբբիներից. ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

- Ձբոսանքը և վիրտուալ խաղերը:

- Ինչի՞ մասին էիր երազում պատանեկության տարիներին:

- Պատանեկության երազանքս Նյու Յորքում լինելն էր: Չափից շատ եմ սիրում այդ քաղաքը:

- Ուսանողական տարիներ. ինչպիսի՞ն է Կրթահամալիրում ուսանողական կյանքը:

- Ուսանողական կյանքս նույնպես բացականերով լի է՝ իհարկե մրցումների պատճառով, բայց ժամանակ առ ժամանակ լիովին տրվում եմ դասերիս:

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունը, ի՞նչ կընտրեիր:

- Մասնագիտությունս փոխելու դեպքում կընտրեի սպորտային բժիշկ:

- Ի՞նչ խորհուրդ կտաս նրանց, ովքեր ցանկանում են ընտրել Կրթահամալիրը:

- Կասեմ, որ շատ ճիշտ ընտրություն է, քանի որ հմուտ իրավաբան դառնալու համար Կրթահամալիրն ունի բոլոր պայմանները:

- Շարժառիթ. ո՞րն է կյանքի շարժառիթը քեզ համար:

- Իմ եսն ավելի ու ավելի կատարելագործել:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսես:

- Միանշանակ սպորտ:

Բլից հարցեր
Պատասխանում ենք կարճ և արագ

- Երեք բառ, որով կբնորոշես ինքդ քեզ:

- Բարություն, կամք, հավատարմություն:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Այսօր քանիսի՞ն եմ մարզվելու:

- Օրն սկսում ես ժամը...

- Առավոտյան ժամը 8-ից:

- Սիրածդ աֆորիզմը:

- Հաջողությունը վերջնական չէ, պարտությունը ճակատագրական չէ, քաջություն ունենալ շարունակելու. ահա՛ թե ինչն է ամենակարևորը:

- Սիրելի զբաղմունքդ:

- Ընկերներիս հետ ժամանակ անցկացնել:

- Խորհուրդ, որը կտայիր:

- Արածի համար չփոշմանել:

- Թե՞յ, թե՞ սուրճ:

- Միանշանակ թեյ:

- Իսկ վերջում... (ավելացրու՛ այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին)

- Շնորհակալություն Ձեզ...

- Մենք քեզ նոր հաղթանակներ ենք ցանկանում:

Հարցազրույցը վարեց
ոստիկանության կապիտան
Մարիետա Խերանյանը

Թևավոր խոսքեր հայ պատմագրության մեջ

Մովսես Խորենացի

* Քաջերի սահմանը նրանց զենքն է. որքան կտրում է, այնքան էլ գրավում է:
* Խոհեմ իմաստությամբ կարելի է հաղթել մեծ զորությանը:
* Պատերազմն իմաստությամբ ավելի լավ է մղվում, քան բազմաթիվ ձեռքերի միջոցով:
* Քաջերի սերունդները քաջեր են:
* Ծնվեց մահկանացու, բայց իր մասին թողեց անմահ հիշատակ:

Փավստոս Բուզանդ

* Նրանք մեռան մեր աշխարհի եկեղեցիների և աստվածատուր հավատի համար, մեռան, որպեսզի մեր աշխարհը չգերվի, քարուքանդ չլինի:
* Նրանք գերադասում էին մեռնել, քան օտար աշխարհում ժամանակ անցկացնել:
* Աշխարհի համար պետք է համարձակ մեռնել:
* Երկրի վրա քաջության անուն թողեք:

Եղիշե

* Ով որ չգիտի, թե ինչ է մահը, վախենում է մահից:
* Լավ է աչքով կույր լինես, քան մտքով:
* Վախը թերահավատության նշան է:
* Քանի որ նահատակություն բառը բազմանշանակ բառ է, նա էլ բազմապիսի շնորհներ է բաժանում մարդկանց:
* Բոլոր առաքինություններից գլխավորը համբերությունն է:

Եզնիկ Կողբացի

* Որիշի աշխարհի վրա աչք ունենալը ոչ թե արդարի, այլ անիրավի գործ է:
* Ոչ ոքի մի՛ տրտմեցնիր ու ոչ ոքից մի՛ տրտմիր:

Սեբեոս

* Մ՛ի խախտիր հավատի սահմանները, որոնք հաստատել են քո հայրերը:
* Լավ է մեռնել և ազատվել չար ծառայությունից, քան թե ապրել:

ՍՏՈՒԳԻ՛Ր ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԴ

1. Եթե գիշերվա 12:00-ին անձրև է գալիս, ապա կարելի՞ է արդյոք ակնկալել, որ 72 ժամ հետո արևոտ եղանակ կլինի:
2. Ջորջ Վաշինգթոն, Շերլոք Հոլմս, Ուիլիամ Շեքսպիր, Լյուդվիգ Վան Բեթհովեն, Նապոլեոն Բոնապարտ և Ներոն: Այս ցուցակում ո՞վ է սկզբունքորեն տարբերվում մյուսներից և ինչո՞ւ:

(պատասխանները՝ հաջորդ համարում)

ԹՈՂ ԿՈՐՉԵ՛Ն ԲՈԼՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

«Հայրենիք մի՛ սպասեք օտարից և ճակատագրից, եթե դա ձեր արյունով պաշտպանելու չափ հայրենասեր չեք»
Գարեգին Նժդեհ

Թվում էր, թե սովորական կիրակի էր 2020 թվականի սեպտեմբերի 27-ը: Լուսաբացին, որ արևն իր շողերը նոր էր տարածում արցախյան բերրի ու հյուրընկալ հողի վրա, որ երկինքը ջինջ ու պարզկա էր, մենք չէինք էլ կարող պատկերացնել, որ այդ հանգստությունը մի վայրկյանում անհետ կկորչի, Արցախ աշխարհի տարբեր մասերում կփլվեն շենքեր, տներ, մարտական հենակետեր և ամեն բան, մարդիկ արտասվող աչքերով ու տագնապահար կհեռանան հայրենիքից: Պատերազմ էր սկսվել Արցախ աշխարհում. ու այդ չարաբաստիկ օրվանից երկիրս սև հագավ: Մարտական գործողություններն սկսվեցին առավոտյան ժամը 07:10-ին և ընթանում էին արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով: Ի պատասխան պատերազմի՝ Հայաստանում և Արցախում հայտարարվեց ռազմական դրություն և ընդհանուր զորահավաք: Պատերազմ՝ մի բառ, բայց անքա՜ն ցավոտ և ողբերգական, այնքա՜ն բան կա ասելու պատերազմի մասին... Հիմա երբ հետադարձ հայացք ենք գցում և վերհիշում ապրած և զգացած օրերը, սրտի ցավն ու հոգու դատարկությունը պարուրում է յուրաքանչյուրիս: Քառասունչորս օր տևեց այդ մղձավանջը, որի թողած տպավորությունները և հետևանքները մեզ կուղեկցեն ողջ կյանքում: Ամեն անգամ փողոց դուրս գալիս, քայլելիս, խոսելիս, ժպտալիս մեզ մեղավոր ենք զգում, չենք կարողանում նայել հերոսների հարազատների աչքերին: Գնացին տղերքը... Չէ՛, պատերազմը տարավ, տարա՛վ անվերադարձ: Ո՞վ կմտածեր, որ մեր հասակակից պատանիներն այնքան մեծացան, որ իրենց կյանքը տվեցին մեզ համար...Ախր շատերը դպրոցական նստարանից վեր կացել ու միանգամից բանակ էին գնացել, չէին հասցրել երիտասարդությունը վայելել, շատերը թողել էին իրենց սիրած աղջիկներին, վերադառնալուց հետո ամուսնանալ խոստանալով՝ բարձրացել դիրքեր, շատերը նոր էին ամուսնացել, իրենց կանանց ամուր գրկել, վերադառնալ խոստացել, մի մասն էլ թողել էին իրենց երեխաներին, ծեր ծնողներին, քույր-եղբայրներին, գնացել էին մեծ գործ կատարելու՝ հայրենիքը պաշտպանելու, որ իրենց ազգն ապրի իր հողի վրա, նոր սերունդներ ծնի՝ հայի արյունով, որի մեջ դարերի պատմություն կա, հարյուրամյակների վրեժ, հերոսների քաջություն ու աննկարագրելի սեր դեպ հայրենիքը:

Դուք խոստացել էիք վերադառնալ, բայց՝ ավա՜ղ... Ամեն ինչից թանկ Հայրենիքն է. եթե չլինի մեր երկիրը, չենք լինի նաև մենք: Ցանկացած զինվոր հերոս է, հերոս է այն գիտակցության ու պատասխանատվության զգացումով, որով գնում է ծառայելու, գուցեև՝ մեռնելու: Ո՛չ պատերազմն է կանխատեսված, ո՛չ էլ մահը: Աննկարագրելի է այդ օրերի ցավն ու վիշտը, հայ մայրերի սպասումն իրենց զավակներին:

Տարիներ հետո գուցե վերադարձնենք մեր հայրենիքի սահմանները, օտար ափերում պատմություն փնտրող հայը կվերադառնա իր օջախ, մենք հաշվի կառնենք դառը դասերը, սակայն անդառնալի են այն կորուստները, որոնք չենք կարող հետ բերել, մենք կորցրել ենք առյուծասիրտ տղաների, բազում մինուճարների: Այսօր հազարավոր ծնողների աչքեր չեն չորանում, այդ աչքերն իրենց զավակների ճամփին են, մայրերը սևազգեստ են, քույրերը՝ գլխիկոր, իսկ կանայք չգիտեն՝ ինչ պատասխան տան հերոսացած հայրերի երեխաներին, որոնք իրենց ամեն մի օրը լուսացնում են հայրերի վերադարձին սպասելով: Արցախում կյանքը շարունակվում է, այն փորձում է հաղթել մահին. միայն թե մեր տղաները մեզնից չհեռանային...

Փա՛ռք և խոնարհում բոլոր նահատակներին, նրանց սխրանքն անմահ է, անունը՝ միշտ պատմելի, իսկ գործը՝ շարունակելի: Համբերություն և տոկունություն ազգիս:

Լիանա Խրշոյան
ոստիկանության ավագ լեյտենանտ

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ» հրատարակչության տպարանում
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30. 06. 2022թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի: